

Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Ակնալճի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Արմավիրի մարզի Ակնալճի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / ծածկագիր՝ 3.1-3/:

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ՝

- իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

-մասնակցում է համայնքի համայնքային բնակավայրերի քաղաքաշինական գլխավոր հատակագծի կազմման ախատանքներին

- մասնակցում է համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման աշխատանքներին

- մասնակցում է համայնքում սահմանված կարգով շինարարության /քանդման/ թույլտվություն տալու և շինարարության ավարտական ակտերի ձևակերպման աշխատանքներին

- մասնակցում է ինքնակամ շինարարության կանխման և կասեցման , դրանց հետևանքների վերացման աշխատանքներին

- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն

-իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-դիմում մրցույթային հանձնաժողովին / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

-սովյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման համար ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին

-արական սեռի անձիք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենը իսկականի հետ միասին

-մեկ լուսանկար 3x4 չափի

-անձնագրի պատճենը

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ակնալճի գյուղապետարան / գ.Ակնալիճ Շահումյան 2/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԲ և ՀԳՄ հարցերով վարչություն/ հասցեն՝ ք.Արմավիր, Աբովյան 71, հեռ.0237-2-07-70/:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2015թվականի մայիսի 25-ն է: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015 թվականի հունիսի 22-ին ժամը 12⁰⁰-ին Ակնալճի գյուղապետարանի շենքում